

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանը հայտարարում է մրցույթ մարզային ենթակայության՝ հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար

ՀՀ Լոռու մարզպետարանի «Արևաշողի առողջության առաջնային պահպանման կենտրոն» և «Մարգահովիտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ների, «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն բժշկական կրթություն և հետբուհական կրթություն ներքին հիվանդություններ (թերապիա), մանկաբուժություն կամ ընտանեկան բժշկություն մասնագիտությամբ, առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ բժշկական ոլորտի ձեռնարկատիրական, կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի առնվազն 2 տարվա ստաժ
- 2ի լրացել հավակնորդի 65 տարին
- իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր)
- կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն, աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ներառյալ՝ ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման, անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման, աշխատանքների բաշխման, կարգապահական պատասխանատվության, խարխուսանքի միջոցների կիրառման,

- Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

Ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝ գույքի, ֆինանսական միջոցների տնօրինման, և գործարքներ կնքելու կարողություններ, .

- Բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում,
- Ենթականների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն, Առնվազն մեկ օտար լեզվի բավարար իմացություն:

Մրցույթները կանցկացվեն

«Մարգահովիտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ՝ 2020թ. հոկտեմբերի 2-ին 11.00-ին

«Արևաշողի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ՝ հոկտեմբերի 2-ին 15.00-ին

«Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ՝ 2020թ. հոկտեմբերի 6-ին 15.00-ին,

Մրցույթներին մասնակցելու համար քաղաքացիները Լոռու մարզպետարան են ներկայացնում՝

1) դիմում, մեկ լուսանկար 3 x 4 չափի, քաղվածք՝ աշխատանքային գրքուկից, ինքնակենսագրություն, անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքուկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային

տեղամասին կցագրման վկայականի) պատճենները, քաղաքացու ցանկությամբ՝ հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում, բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել), կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ), որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ աշխատանքային պայմանագրի կնքման դեպքում դրանում նախատեսված ժամկետում կազմակերպության զարգացման նախնական ծրագրի հիման վրա նրա կողմից ներկայացվում է կազմակերպության զարգացման հիմնական ծրագիրը, որը ներառում է բաժիններ կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ:

Քաղաքացին մրցույթներին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները: Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9.00-15.00, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2020թ օգոստոսի 28-ը:

Մրցույթները կկայանան մարզպետարանի շենքում /ք.Վանաձոր, Հայքի հրապարակ/:

Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

/ ք.Վանաձոր, Հայքի հրապարակ, հեռախոս 0322-2-33-99/:

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմ